Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Գ. Բ. ԴԱՐԲԻՋԱՆՅԱՆ

Սովետական Միության ժողովուրդների ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի պատմությունը անխզելիորեն կապված է համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի անվան ու գործունեության հետ։

Շարունակելով ու զարգացնելով Կարլ Մարքսի ու Ֆրիդրիխ Էնգելսի գործը, Վ. Ի. Լենինը աշխատավոր մարդկությանը ոչ միայն ցույց ավելց շահագործող դասակարգերի լծից ազատագրվելու ճիշտ ուղին, այլև գլխավորեց նրանց ռևոլյուցիոն պայքարը մինչև կատարյալ հաղթանակ աշխարհի մեկ վեցերորդ մասում և դարձավ պատմության մեջ առաջին բանվորա-գյուղացիական պետության հիմնադիրն ու ղեկավարը, Սովետական իշխանության ստեղծողը։

Վ. Ի. Լենինի և նրա ստեղծած բոլշևիկյան պարտիայի անվան ու գործունեության հետ է կապված նաև հայ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի, Հայաստանում սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման, սոցիալիստական հասարակարգի կառուցման պատմությունը։

* * *

Ցարական Ռուսաստանը աշխարհի ամենախոշոր բազմազգ պետություններից էր։ Ոչ ռուս ժողովուրդներն այնտեղ կազմում էին բնակչության մեծամասնությունը։ XIX դարի վերջին Ռուսաստանի տերիտորիայում կար 125,7 միլիոն բնակչություն, որից ռուսները կազմում էին 44, 3 տոկոս, ուկրաինացիները՝ 17,8, բելոռուսները՝ 4,7, թաթարները՝ 3, վրացիները՝ 0,9, հայերը՝ 0,9 տոկոս և այլն[1]։

Ցարական ինքնակալությունը դաժանորեն ճնշում էր այդ ժողովուրդներին, ենթարկում նրանց ամեն տեսակի շահագործման, ստորացման ու վիրավորանքի։

Այսպիսի պայմաններում, բանվոր դասակարգը չէր կարող հաղթանակ տանել ցարիզմի և կապիտալիզմի դեմ՝ առանց ճիշտ ազգային քաղաքականության։ Ահա թե ինչու դեռևս իր գործունեության վաղ շրջանից Վ. Ի. Լենինը հետևողականորեն զբաղվում էր բազմազգ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների սոցիալ-տնտեսական պայմանների, նրանց ազատագրական պայքարի հարցերով։

1894 թ. գրած «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» հռչակավոր գրքում Վ. Ի. Լենինը առաջ քաշեց բանվոր դասակարգի և գյուղացիության ռևոլյուցիոն դաշինքի՝

---

[1] См. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., СПб 1905, т II, էջ 326—329, 331—332, 344, 347.

որպես ռուսական ցարիզմի և կապիտալիզմի տապալման գլխավոր պայմանի գաղափարը։ «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները» (1897 թ.) աշխատության մեջ Վ. Ի. Լենինը նշում էր, որ ռուսական բանվոր դասակարգը իր քաղաքական պայքարում միայնակ չէ, նա ունի իր դաշնակիցները, հանձինս ճնշված ժողովուրդների[1]։ Վ. Ի. Լենինը խնդիր էր դնում պրոլետարիատի շուրջը համախմբել աշխատավոր և շահագործվող մասսաներին, ռուսական ինքնակալության կողմից ճնշված ու հետապնդվող բոլոր ժողովուրդներին։

XIX դարի վերջում գրած իր մի շարք աշխատություններում և, մասնավորապես, «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» (1898 թ.) գրքում տալով Ռուսաստանի կենտրոնական շրջաններում կապիտալիստական հարաբերությունների զարգացման խորը վերլուծությունը, Վ. Ի. Լենինը կանգ է առնում նաև ցարիզմի գաղութային ճնշման տակ գտնվող ծայրամասերի, այդ թվում և Կովկասի սոցիալ-տնտեսական պայմանների վրա, ցույց է տալիս Կովկասի գաղութացման պրոցեսը։ Այս հարցերի լուսաբանման համար Վ. Ի. Լենինը հսկայական գրականություն էր ուսումնասիրել, օգտվել էր Կովկասի և նրա ժողովուրդների մասին եղած շատ սկզբնաղբյուրներից։

XIX դարի վերջից մարքսիստական գաղափարներն սկսեցին տարածվել նաև Անդրկովկասում ու Հայաստանում, ուր կապիտալիզմի զարգացման հետևանքով առաջացել ու ձևավորվում էր բանվոր դասակարգը։

Մարքսիզմի առաջին պրոպագանդիստներն Անդրկովկասում Ռուսաստանից այստեղ աքսորված և այնտեղից վերադարձած սոցիալ-դեմոկրատներն էին, որոնց ջանքերով էլ Թիֆլիսում, Բաքվում, Բաթումիում և այլ վայրերում ստեղծվում են մարքսիստական սոցիալ-դեմոկրատական խմբակներ։

1899 թ. Վ. Ի. Լենինը նշում էր Ռուսաստանի տարբեր վայրերում, այդ թվում նաև Կովկասում, սոցիալ-դեմոկրատական ռևոլյուցիոն աշխատանքի բավական բարձր զարգացումը[2]։

Բացառիկ նշանակություն տալով պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներների կադրերի ձևավորմանը, Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն էր դարձնում նրանց ինտերնացիոնալ կազմին և իր ռևոլյուցիոն գործունեության հենց սկզբից հոգ էր տանում բոլոր ժողովուրդների անձնվեր զավակներից պարտիական-ռևոլյուցիոն կադրեր դաստիարակելու մասին։ Սկսած XIX դարի 90-ական թվականներից և մասնավորապես XX դարի սկզբից Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ, ռևոլյուցիոն մարքսիստական պարտիայի ստեղծման ու ամրապնդման համար՝ ռուս, ուկրաինացի, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի ներկայացուցիչների կողքին, որպես հավատարիմ լենինյաններ հանդես են գալիս նաև հայ ժողովրդի զավակները։

Լենինյան դպրոցի հայ ռևոլյուցիոն գործիչներից ամենահինը Բսահակ Քրիստափորի Լալայանցն է (1870—1933), Վ. Ի. Լենինի մոտ ընկերն ու բարեկամը։

Վ. Ի. Լենինի և Ի. Ք. Լալայանցի առաջին հանդիպումն ու անձնական ծանոթությունը տեղի է ունենում 1893 թ. սկզբին Սամարայում, որտեղ նրանք Ա. Պ. Սկլյարենկոյի հետ միասին հիմնում են մարքսիստական խմբակ։ Մինչ այդ Լալայանցը ռևոլյուցիոն աշխատանք էր տարել Կովկասում, Կազանում եղել էր Ն. Ե. Ֆեդոսեևի խմբակի անդամ։ Լենինի հետ ունեցած առաջին իսկ

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 2, էջ 428։
2 Նույն տեղում, հ. 4, էջ 268

հանդիպումն ու զրույցները անջնջելի տպավորություն են թողնում Լալայանցի վրա։ Վ. Ի. Լենինի մասին հիշողություններում նա գրել է.

«Այդ 23-ամյա մարդու մեջ ամենազարմանալի կերպով զուգակցվում էին, մի կողմից, պարզությունը, նրբազգացությունը, կենսուրախությունն ու կրքոտությունը, և մյուս կողմից՝ մեծալրջությունը, գիտելիքների խորությունը, արամաբանական անողոք հետևողականությունը, դատողության և սահմանումների պարզությունն ու հստակությունը»[1]։

Իր մանկությունն ու պատանեկությունը Լալայանցը անց է կացրել Կովկասում, Թիֆլիսում և Կովկասի այլ վայրերում, մասնակցել է սոցիալ-դեմոկրատական խմբակների աշխատանքներին։ Նա լավ գիտեր Անդրկովկասի ժողովուրդների կյանքն ու կենցաղը։ Տիրապետելով հայերենին, Լալայանցը «գնում էր Լենինին՝ ծանոթանալու հայ ժողովրդի ազատագրական պայքարին, հայ մարքսիստական մամուլին։

XX դարի սկզբից ուժեղանում և մշտական են դառնում Վ. Ի. Լենինի կապերը Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժումների և ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատների հետ։ Իր աշխատություններով, «Իսկրա»-ում տպագրված հոդվածներով, բազմաթիվ նամակներով և մարդկանց միջոցով Վ. Ի. Լենինը ղեկավարում և ուղղություն էր տալիս Կովկասի սոցիալ-դեմոկրատական շարժմանը, մարքսիզմի տարածմանն ու լենինյան-իսկրայական կազմակերպությունների ձևավորմանը։

1903 թ. փետրվարի 1-ին «Իսկրա»-ում հրապարակվում է Վ. Ի. Լենինի «Հայ սոցիալ-դեմոկրատների Մանիֆեստի մասին» հոդվածը, որը ծրագրային նշանակություն ունեցավ հայ մարքսիստների հետագա ամբողջ գործունեության, հայ ժողովրդի ռևոլյուցիոն ազատագրական պայքարի համար։

1902 թ. կեսերին ՌՍԴԲՊ Բաքվի և Թիֆլիսի կոմիտեների օգնությամբ և Մաքսիմե Շահումյանի, Բոգդան Կնունյանցի և Արշակ Զուրաբյանի նախաձեռնությամբ Թիֆլիսում կազմակերպվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների Միություն», որը 1902 թ. հոկտեմբերին հիմնադրում է լենինյան-իսկրայական ուղղության հայերեն լեզվով առաջին տպագիր «Պրոլետարիատ» անլեգալ թերթը։ Թերթը սկսվում էր «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության Մանիֆեստով։ Հայ մարքսիստների օրգանը անողոքաբար մերկացնում էր ամեն տեսակի օպորտունիզմը, բուրժուական նացիոնալիստներին և մասնավորապես «դաշնակցություն» պարտիայի ավանտյուրիզմը։

1903 թ. հունվարին Վ. Ի. Լենինը Լոնդոնում ստանում է «Պրոլետարիատ» թերթը և ոուսերեն լեզվով մի ձեռագիր հոդված, որի մեջ շարադրված էր թերթի համառոտ բովանդակությունը։ «Պրոլետարիատ»-ը ջերմորեն հետաքրքրում է Վ. Ի. Լենինին։ Որոշելով նրա մասին հոդված գրել «Իսկրա»-ում, Վ. Ի. Լենինը 1903 թ. հունվարի 28-ին նամակ է ուղարկում ժնև Գ. Վ. Պլեխանովին, որտեղ գրում է.

[1] Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, Երևան, 1957 թ., էջ 135։ 1933 թ. հուլիսի 19-ին Ի. Ք. Լալայանցի մահվան կապակցությամբ «Պրավդա»-ում տպագրված մահախոսականում որը ստորագրել էին Մ. Ի. Ուլյանովան, Դ. Ի. Ուլյանովը և ուրիշներ, նշվում էր Լալայանցի մտերմությունը Վ. Ի. Լենինի հետ, Լենինի կողմից նրա նկատմամբ եղած բացառիկ հոգատարությունը։ «90-ական թվականներից սկսած, երկար տարիների ընթացքում,— գրում էին նրանք,— Լալայանցը եղել է Լենինի կինակիցներից և բարեկամներից մեկը»։ („Правда", 1933, г., № 197)։

«Ուղարկում եմ Զեզ և «Պրոլետարիատ»-ը։

Բարի եղեք խնդրել Լալայանցին կամ մեկ ուրիշին, այստեղից թարգմանելու ամբողջը, ինչ վերաբերում է նացիոնալիզմին և ֆեդերալիզմին և որքան կարելի է շուտ ուղարկել ինձ։ Նրանց մասին պետք է անպայման հոդված գտնել (ուղարկված հոդվածը ուղղման կարիք ունի, իսկ դրա համար անհրաժեշտ է բնագիրը)»[1]։

Իր հոդվածում հանդամանորեն քննարկելով «Պրոլետարիատ»-ի առաջին համարի նյութերը և Միության «Մանիֆեստը», Վ. Ի. Լենինը ողջունում է հայ իսկրայականներին և ուղղություն է տալիս նրանց գործունեությանը։ «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության Մանիֆեստը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— և մանավանդ, ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշադրավ փորձը»[2]։

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Անդրկովկասի բոլշևիկները իրենց կազմակերպությունները կառուցում էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով, ազգային հարցի մարքսիստական-լենինյան լուծման օրինակ էին ցույց տալիս։ Վ. Ի. Լենինը բարձր է գնահատել այս ուղղությամբ Անդրկովկասի՝ վրացի, հայ, ադրբեջանցի, ռուս բոլշևիկների հետևողական աշխատանքը «...Մեզ մոտ և Կովկասում,— գրել է Վ. Ի. Լենինը Ա. Մ. Գորկուն 1913 թ. փետրվարին,— ս. դ. վրացիները+հայերը+թաթարները+ռուսները աշխատում էին միասին տասը տարուց ավելի միասնական ս. դ. կազմակերպության մեջ։ Այդ ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում։ Միակ լուծումը...»[3]։

Վ. Ի. Լենինը կազմակերպում և ուղղություն էր տալիս Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների գործունեությանը, հոգ էր տանում «Իսկրա»-ն Անդրկովկասում տարածելու մասին։ «Իսկրա»-ի համարները հասնում էին նաև Հայաստան։ 1901—1903 թթ. «Իսկրա»-ն և նրա հրատարակություններն ստացվում ու տարածվում էին Երևանում, Ալեքսանդրապոլում, Ջալալ-օղլիում, Կարսում, Եկենովկայում և այլ վայրերում[4]։

Լենինյան «Իսկրա»-ն լուսաբանում էր նաև Անդրկովկասում և հայ իրականության մեջ տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները, դաստիարակում էր հայ իսկրայականների հիանալի կադրեր, որոնց միջոցով հրատարակվեցին և տարածվեցին հայերեն լեզվով առաջին մարքսիստական ռևոլյուցիոն թռուցիկները, թերթերն ու բրոշյուրները։

Հայաստանում ծավալվող իրադարձությունների մարքսիստական լուսաբանման համար առանձնապես կարևոր նշանակություն ունեն Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ ու զինակից Բոգդան Կնունյանցի մի շարք հոդվածները տպագրված 1903 թ. «Իսկրա»-ում («Բաքվի բանվորների անընդհատ գործադուլների պատճառները»[5], «Նոր թալան»[6], «Մեր տակտիկայի և կազմակերպության մի քանի հարցերը»[7] և այլն)։ Վ. Ի. Լենինը բարձր գնահատական է տվել

[1] Ленинский сборник, т. IV, 1925. էջ 208։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 411։

[3] Նույն տեղում, հ. 35, էջ 79։

[4] Տե՛ս ЦПАИМЛ, ф. 25, оп 20, д. 34403; ЦГИА ГрузССР. ф. 39, д. 556; ЦГИА Арм. ССР. ф. 121, д 3; „Исторический архив", 1959, № 2, էջ 257։

[5] Տե՛ս „Искра", 1903 г., № 47.

[6] Տե՛ս Նույն տեղում, № 49։

[7] Տե՛ս Նույն տեղում, № 51։

Բ. Կնունյանցի մասնակցությանը ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի աշխատանքներին և նրա հետագա գործունեությանը։

Պահպանվել են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն էր նվիրում Անդրկովկասում անլեգալ ռևոլյուցիոն դրականության հրատարակության գործի կազմակերպմանն ու ծավալմանը։

1903—1905 թթ. Թիֆլիսում վրացերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով լույս է տեսնում ՌՍԴԲՊ Կովկասյան միութենական Կոմիտեի օրգան «Պրոլետարիատի կռիվը» թերթը, որն արժանանում է Վ. Ի. Լենինի ջերմ հավանությանն ու օժանդակությանը։ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ պարտիայի կենտրոնական օրգան «Պրոլետարի»-ն հաղորդումներ էր տպագրում այդ թերթի յուրաքանչյուր համարի մասին, տալիս էր նրանում տպագրված հոդվածների տեսությունը, իսկ առանձին հոդվածներ արտատպում էր։

«Պրոլետարիատի կռիվը» թերթում են տպագրվել Վ. Ի. Լենինի աշխատությունների առաջին հայերեն թարգմանությունները՝։ 1903 թ. ապրիլ-մայիսին թերթի № № 2—3-ում լույս են տեսնում Վ. Ի. Լենինի «Միապետությունը տապանվում է» և «Պարտիայի 2-րդ համագումարի հրավիրման կազմակերպչական կոմիտեի ծանուցումը» հոդվածները, 1905 թ. հունիսի 1-ի № 6-ում՝ «Երրորդ համագումարը» հոդվածը և 3-րդ համագումարի բանաձևը՝ Կովկասի դեպքերի մասին («Երրորդ համագումարի որոշումը՝ Կովկասում պատահած անցքերի առթիվ»), որը գրել էր Վ. Ի. Լենինը, 1905 թ. հուլիսի 15-ի № 7-ում լույս է տեսնում «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական նպատակները» հոդվածը։

1905 թ. սկզբներին Հավլաբարի տպարանում հայերեն թարգմանությամբ առանձին բրոշյուրով տպագրվում է Վ. Ի. Լենինի «Պրոլետարիատի և դյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրայի մասին» աշխատությունը։ Նույն թվականի հուլիսի 20-ին լույս է տեսնում Վ. Ի. Լենինի «Պետական կարգի երեք սահմանադրություն կամ երեք կարգ» թերթիկը՝ 1500 օրինակով, «ՌՍԴԲՊ Կովկասյան Միության Թիֆլիսի կոմիտե» ստորագրությամբ[2]։

1905 թ. Անդրկովկասի բոլշևիկները հայերեն լեզվով հրատարակում են պարտիայի 3-րդ համագումարի որոշումները, 3-րդ համագումարում ընդունված պարտիայի կանոնադրությունը, Տամերֆորսի կոնֆերանսի բանաձևերը և այլ նյութեր, որոնց մշակման գործում ղեկավար մասնակցություն էր ունեցել Վ. Ի. Լենինը։

1906 թ. Վ. Ի. Լենինի աշխատություններից թարգմանաբար քաղվածքներ

---

[1] Նախառևոլյուցիոն շրջանում Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունների առաջին հայերեն թարգմանությունների մասին տես Վ. Ավետիսյան, «Լենինի և Ստալինի աշխատությունների հայերեն թարգմանությունները նախառևոլյուցիոն շրջանում» («Բիբլիոգրաֆիական ամսագիր», Երևան, 1941, № 1, էջ 8—14), Ե. Խալեյան, «Կոմունիստական մանիֆեստի հայերեն թարգմանությունները և հրատարակությունները» (ՀՍՍՌ ԳԱ, Հասարակական գիտությունների «Տեղեկագիր», 1948, № 3, էջ 3—10), «Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիա», կազմեցին Լ. Բ. Մելքումյան, Վ. Ն. Կարմենյան, Երևան, 1950, «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա», կազմեց Հովհ. Պետրոսյան, Երևան, 1954, Խ. Բարսեղյան, «Հայ բոլշևիկյան պարբերական մամուլի պատմություն», Երևան 1955։

[2] Տե՛ս А лабирская нелегальная типография, сборник материалов и документов. Тбилиси 1954. էջ 16—32։

են տպագրում «Կայծ» և «Նոր խոսք» բոլշևիկյան լեգալ թերթերը։ «Կայծ»-ի 1906 թ. № 14-ում ընդարձակ քաղվածք է բերված Վ. Ի. Լենինի «Նոր վերելք» հոդվածից, իսկ «Նոր խոսք»-ի № 6-ում՝ «Փոթորկից առաջ» հոդվածից։

Վ. Ի. Լենինի աշխատությունների այս առաջին հայերեն թարգմանություններն ու հրատարակությունները, որոնք հրապարակվում էին նրա աշակերտների կողմից, խոշոր դեր խաղացին հայ աշխատավորության դասակարգային գիտակցության ձևավորման գործում, ոտքի հանեցին նրանց ընդդեմ ցարիզմի և բուրժուազիայի։

Մեծ ուշադրություն նվիրելով ազգային լեզուներով մարքսիստական գրականության հրատարակմանը, Վ. Ի. Լենինը պարտիայի 2-րդ համագումարից անմիջապես հետո այդ մասին հարց է դնում ՌՍԴԲՊ Կենտրոնական Կոմիտեի առաջ։ 1903 թ. հոկտեմբերին Ժնևից Կովկասյան Միութենական Կոմիտեին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը և Գ. Վ. Պլեխանովը գրում էին. «Մենք այժմ եռանդուն մտածում ենք այստեղ վրացական և հայկական գրականության հրատարակության կազմակերպման մասին։ Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնհաս ընկերներ. փող, հույս ունենք ճարել։ Հարկավոր է օգնություն և՛ դրամանությամբ, և՛ միջոցներով։

Կովկասի ընկերներին հղում ենք ողջույն և ջերմորեն ցանկանում ենք հաջողություններ աշխատանքի մեջ»[1]։

Վ. Ի. Լենինը շատ ջանք է թափում այդ գործն իրականացնելու համար։ 1904 թ. դեկտեմբերին նրա նախաձեռնությամբ Ժնևում, ՌՍԴԲՊ Կենտրոնական Կոմիտեին կից ստեղծվում է վրացերեն և հայերեն լեզուներով պարտիական սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակության հանձնաժողով, որը վրացական խմբեր ուներ Փարիզում, Մյունխենում, Լայպցիգում, Ժնևում, և հայկական խմբեր՝ Ժնևում ու Բեռլինում։ Հրատարակված գրականությունը հանձնաժողովն ուղարկում էր խմբերին, իսկ վերջինների միջոցով՝ Կովկաս[2]։

Հանձնաժողովում Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ ղեկավար դեր էր կատարում Ս. Գ. Շահումյանը, որն այն ժամանակ գտնվում էր Ժնևում։ Հայերեն լեզվով մարքսիստական գրականության հրատարակչությամբ զբաղվում էին նաև Արշակ Զուրաբյանը, Միքայել Մանուչարյանը և ուրիշներ։

1904 թ. հանձնաժողովը հրատարակում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ը՝ երեք առաջաբաններով, Ս. Շահումյանի և Մ. Մանուչարյանի թարգմանությամբ։ Հանձնաժողովի կողմից հրապարակվեցին նաև Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ»-ը (Ս. Շահումյանի թարգմանությամբ), «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի երկրորդ համագումարի մասին ծանուցումը» լենինյան փաստաթղթերով և մարքսիստական այլ գրականություն։ Այս հրատարակությունների վերջում նշվում էր հանձնաժողովի հասցեն Վ. Ի. Լենինի անունով՝ N. O[illegible]anoff, 3, rue de la Co[illegible]line (près Pont—Neuf), Genève. —Suiss[illegible]. [illegible] для „комиссии“[3].

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 199։

2 Տե՛ս «Հայերեն և վրացերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականության հանձնաժողովի» հաշվետվությունը. Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի արխիվ, փաստաթուղթ № 35420։

3 Տե՛ս Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Մանիֆեստ կոմունիստական կուսակցության, Ժնև, 1904 թ.։

Վ. Ի. Լենինը անձամբ հետևում և ուղղություն էր տալիս հանձնաժողովի աշխատանքներին, կազմակերպում էր հրատարակված գրականության առաքումը Անդրկովկաս, կապ էր պահպանում կովկասյան ընկերների հետ։

Բարձր գնահատելով Անդրկովկասի բոլշևիկների մեծ աշխատանքը բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում, Վ. Ի. Լենինը նրանց ցուցում էր տալիս միշտ հավատարիմ մնալ պրոլետարական ինտերնացիոնալիզմի գրոշին։ Իր աշխատություններում և գրական գործունեությամբ Վ. Ի. Լենինը անողոքաբար մերկացրել է վրացական, հայկական ու ադրբեջանական բոլոր գույնի նացիոնալիստներին, բուրժուա-նացիոնալիստական, պարտիաներին ու խմբերին, որոնք ձգտում էին անջատել իրարից հայ, վրացի, ադրբեջանական բանվորներին ու աշխատավորական մասսաներին, կտրել նրանց ռուս պրոլետարիատի դասակարգային պայքարից և դրանով իսկ կազմալուծել ռևոլյուցիոն շարժումները Անդրկովկասում։

1905 թ. սեպտեմբերի 7-ին ՌՍԴԲՊ Կենտրոնական Կոմիտեին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը ամենայն խստությամբ նշավակում էր ժնևի հայ սպեցիֆիկների խումբը, որակելով նրանց որպես «բունդական կրեատուրա» և «ժնևյան կազմալուծիչների շայկա»։ «Խիստ նախազգուշացնում եմ «Հայկական սոց.-դ. ֆեդերացիայի» վերաբերյալ,— գրում էր Վ. Ի. Լենինը,— եթե դուք համաձայնել եք, որ նա մասնակցի կոնֆերենցիային[1], ապա ճակատագրական սխալ եք կատարել, հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի։ Դրանք մի գույգ ժնևյան կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ։ Դա բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար։ Եթե դուք թույլ տաք այդ մարդկանց ռուսական կոնֆերենցիա, այսինքն՝ Ռուսաստանում աշխատող կազմակերպությունների կոնֆերենցիա գալու, դուք սարսափելի կխայտառակվեք։ Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են գրականագետ կազմալուծիչների այդ շայկային (այդ բանը ես գիտեմ շատերից), և մենք շուտով կշշպրենք նրանց «Պրոլետարի»-ում։ Դուք կառաջացնեք միայն Կովկասի բողոքները և «հաշտության» ու «միավորման» փոխարեն՝ նոր գզվռոտոց։ Ասացեք խնդրեմ, ինչպե՞ս կարելի է անտեսել Կովկասյան Միությունը, Ռուսաստանում՝ բազմաթի՞վ աշխատողներին և մտերմանալ ժնևյան ճահճի տականքների հետ։ Աղերսում եմ, մի արեք այդ բանը»[2]։

Վ. Ի. Լենինը հատուկ ուժով մերկացրել է «դաշնակցություն» պարտիան և նրա ռեակցիոն գործիչներին։ 1907 թ. «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը ռուսական առաջին ռևոլյուցիայում» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ 3-րդ Պետական դումայում «դաշնակցություն» պարտիայի ներկայացուցիչներ Հ. Սապաթելյանը (Երևանի նահանգից) և Տեր-Ավետիքյանը (Էրիվանի նահանգից) ագրարային հարցում կանգնած էին գյուղական համայնքի պաշտպանության ռեակցիոն տեսակետի վրա, փաստորեն հանդես էին գալիս բուրժուազիայի և կալվածատերերի՝ ցարիզմի այդ հավատարիմ հենարանների օգտին[3]։ Սապաթելյանին Վ. Ի. Լենինը հեգնանքով անվա-

1 Խոսքը Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական կոնֆերենցիայի մասին է, որը կայացավ Ռիգայում 1905 թ. սեպտեմբերի 7—9-ը.—Դ. Ղ.։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 383—384։

3 Նույն տեղում, հ. 13, էջ 513—514։

նել է «Համայնքի պատվարժան ասպետ»[1], որը ողբում է Ռուսաստանում գյուղական համայնքին սպառնացող վտանգի համար։

Իր հետագա աշխատություններում Վ. Ի. Լենինը բազմիցս խոսել է դաշնակների մասին, մերկացրել նրանց կոնտրռևոլյուցիոն էությունը։

* * *

Ռեակցիայի, բանվորական շարժման նոր վերելքի և իմպերիալիստական պատերազմի տարիներին հարկադրաբար գտնվելով էմիգրացիայում, Վ. Ի. Լենինը շարունակում էր ղեկավարել ինչպես ամբողջ պարտիայի, այնպես էլ նրա անդրկովկասյան ջոկատի աշխատանքները, ուղղություն էր տալիս երկրում ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին։ Վ. Ի. Լենինը մշտական կապ ուներ Անդրկովկասի բոլշևիկների հետ, հետևում էր նրանց աշխատանքին, նամակներով ու կենդանի մարդկանց միջոցով դիրեկտիվներ, ցուցումներ էր տալիս նրանց։ «Կովկասյան բոլշևիկների խմբի հետ մենք միշտ առանձնապես բարեկամական նամակագրություն ունեինք»,— հիշում է Ն. Կ. Կրուպսկայան։

1954 թ. Վ. Ի. Լենինի Կրակով-Պորոնինոյի արխիվից, այլ փաստաթղթերի հետ միասին, Կենտրոնական պարտիական արխիվն է հանձնվել նաև ՌՍԴԲՊ Կենտկոմի հասցեների գիրքը, Ն. Կ. Կրուպսկայայի կազմած 1912—1914 թթ. ռուսական այն հասցեներով, որոնց միջոցով պարտիայի Կենտկոմը, Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան կապվում էին տեղական պարտիական կազմակերպությունների և առանձին գործիչների հետ։ Դրանց մեջ մեծ տեղ են գրավում Անդրկովկասի տարբեր քաղաքներում (Բաքու, Թիֆլիս, Քութայիս, Սուխումի, Սամարեղի և այլն) բնակվող, ինչպես նաև աքսորավայրերում եղած պարտիական գործիչների՝ Ս. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Ս. Սպանդարյանի, Ֆ. Մախարաձեի, Ի. Լալայանցի, Ե. Ստասովայի, Վ. Բիրինեյշվիլու, Ս. Տորոշելիձեի, Մ. Կարակոզովի և ուրիշների հասցեները[2]։

Ռեակցիայի տարիներին բոլշևիկյան կենտրոնի՝ Ռուսաստանի հետ կապերի մասին են վկայում Կրուպսկայայի նամակները Մ. Վ. Կորեցկուն[3], որոնք նույնպես վերջերս հրատարակվել են «Исторический архив» ժուռնալում։

Պահպանվել է Վ. Ի. Լենինի և Ն. Կ. Կրուպսկայայի նամակագրությունը Ս. Շահումյանի, Մ. Ցխակայայի, Ս. Սպանդարյանի, Ս. Օրջոնիկիձեի, Ե. Դ. Ստասովայի, Ա. Ս. Ենուկիձեի, Վ. Կասպարովի, Ա. Բեկզադյանի, Ս. Կասյանի և ուրիշների հետ[4]։ Վ. Ի. Լենինը Կովկաս էր ուղարկում փորձված պարտիական գործիչների՝ տեղում օգնություն կազմակերպելու համար։ 1911—1913 թթ. Վ. Ի. Լենինի հետ արտասահմանում հանդիպումներ են ունենում Ի. Ստալինը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը, Կամոն (Սիմոն Տեր-Պետրոսյան) և ուրիշներ, որոնք տեղեկություններ էին հաղորդում պարտիայի առաջնորդին՝ Ռուսաստանում և Կովկասում տեղի ունեցող իրադարձությունների մասին և նրանից կոնկրետ ցուցումներ ստանալով, վերադառնում էին Ռուսաստան։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 513։

[2] Н. К. Крупская, Воспоминания о Ленине, Москва, 1957 г., էջ 177։

[3] Տե՛ս „Исторический архив", 1959 г., № 1.

[4] Տե՛ս նույն տեղում։

[5] Տե՛ս ЦПАИМЛ, ф. 17, оп. 2, ед. хр. 29, 55, 139, 154, 231, 253, 275 и т. д., „Исторический архив", 1957 № 1, էջ 3—45, № 2, էջ 41—64։

Կոմունիստական պարտիայի, ազգային հարցում նրա թեորիայի ու քաղաքականության մշակման, անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների, հայ ժողովրդի ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի կազմակերպման համար անգնահատելի նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի և Ս. Գ. Շահումյանի նամակագրությունը, որը սկսվեց 1904 թ. և շարունակվեց մինչև 1918 թ.։

Բարձր գնահատելով Ս. Շահումյանի մարքսիստական տեսական պատրաստականությունը, Վ. Ի. Լենինը խորհրդակցում էր նրա հետ ազգային հարցում պարտիայի ծրագրերը մշակելիս, հարցերը պարզելու համար նյութեր էր խնդրում նրանից, ցույց էր տալիս նրա առանձին սխալները։ Ս. Շահումյանը իր կարծիքներն էր հայտնում Վ. Ի. Լենինին, նյութեր էր ուղարկում նրան Կովկասում ազգային հարցի, այդ թվում նաև հայկական գործերի մասին։

1913 թ. օգոստոսի 24-ին Պորոնինոյից Աստրախան ուղարկված նամակում Վ. Ի. Լենինը Ս. Շահումյանին գրում էր. «Թանկագին ընկեր։ Վերադառնալով տուն, ես գտա Ձեր նամակը։ Անպայմանորեն ավելի շատ նյութեր ուղարկեցեք ազգային հարցի մասին Կովկասում (քանի որ դուք, դժբախտաբար, ինքներդ գրել չեք կարող), և Կոստրովի հոդվածը, և նրա գրքույկները, դեպուտատների զեկուցումները ռուսերեն թարգմանությամբ (հուսով եմ, կգտնեք որևէ մեկին, որին կարելի է հանձնարարել), և Կովկասի ազգությունների վիճակագրությունը, և նյութեր Կովկասում, Պարսկաստանում, Թուրքիայում և Ռուսաստանում ազգությունների հարաբերությունների մասին, մի խոսքով՝ այն բոլորը, ինչ կա ու ինչ հավաքել կարող եք, ուղարկեցեք։ Մի մոռացեք նույնպես փնտրել այնպիսի կովկասցի ընկերներ, որոնք կարողանային Կովկասում ազգային հարցի մասին հոդվածներ գրել»[1]։

1913 թ. սեպտեմբերի 7-ի նամակում Ս. Շահումյանը Վ. Ի. Լենինին հայտնում էր. «Ուղարկում եմ Ձեզ խոստացածս բրոշյուրը և հայկական գործերի վերաբերյալ երկու զեկուցումների թարգմանությունը»[2]։ Այնուհետև նա գրում էր ազգային հարցի վերաբերյալ մի շարք աղբյուրների և այլ գործերի մասին։

Պատասխանելով Ս. Շահումյանի 1913 թ. նոյեմբերի 15-ի նամակին Վ. Ի. Լենինը նույն թվականի դեկտեմբերի 6-ին գրում էր. «Թանկագի՛ն բարեկամ։ Շատ ուրախ եղա 15 XI թվակիր Ձեր նամակի համար։ Դուք պիտի իմանաք, որ իմ վիճակում մարդ անչափ գնահատում է Ռուսաստանի ընկերների, մանավանդ խոհուն և տվյալ հարցով զբաղվող ընկերների կարծիքները։ Ձ՛ր արագ արձագանքելը այս պատճառով ինձ համար առանձնապես հաճելի էր։ Զղում ես քեզ ավելի պակաս կտրված, երբ այդպիսի նամակներ ես ստանում»[3]։

Այս նույն նամակում Վ. Ի. Լենինը առաջարկում է Ս. Շահումյանին հանրամատչելի բրոշյուր գրել ազգային հարցի վերաբերյալ և նշում այդպիսի բրոշյուրի անհրաժեշտությունը[4]։

Կատարելով Վ. Ի. Լենինի առաջարկը, Շահումյանը 1914 թ. հայերեն լեզվով հրատարակում է իր «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշ-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 104։
2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 259։
3 Վ. Ի. Լենին, Երկեր հ. 19, էջ 623։
4 Տե՛ս նույն տեղում, էջ 627։

խատությունը ուղղված հայ բունդականների՝ սպեցիֆիկների պարագլուխ Դավիթ Անանունի դեմ։ Ազգային հարցի վերաբերյալ լենինյան սկզբունքների պաշտպանությանն ու պրոպագանդային նվիրված այս բրոշյուրը խոշոր դեր խաղաց հայ աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության գործում։

1914 թ. մայիսի 19-ի նամակում Վ. Ի. Լենինը առաջարկում է Ս. Շահումյանին «Պրոսվեշչենիե» բոլշևիկյան ժուռնալում անպայման տալ այդ բրոշյուրի «selbstanzeige» (հաղորդում հեղինակից — Գ. Ղ.) կամ շարադրանք, որի համար առաջարկում է իր պլանը[1]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին սահմանադրական նացիոնալիզմի և շովինիզմի ուժեղացման պայմաններում Անդրկովկասի բոլշևիկներին անգնահատելի օգնություն ցույց տվին Վ. Ի. Լենինի աշխատությունները ազգային հարցի մասին («Քննադատական դիտողություններ ազգային հարցի առթիվ», «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» և այլն), ՌՍԴԲՊ Կենտկոմի 1913 թ. Կրակովի և Պորոնինոյի խորհրդակցությունների որոշումները, որոնք կոնկրետ ուղիներ էին նշում ռևոլյուցիայի զարգացման, ազգային հարցի մարքսիստական լուծման համար։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի ժամանակ գրած իր մի շարք աշխատություններում Վ. Ի. Լենինը բազմիցս անդրադարձել է Հայաստանի նկատմամբ ցարիզմի իմպերիալիստական քաղաքականության հարցերին։

Դատապարտելով ցարիզմի ավազակային քաղաքականությունը, Վ. Ի. Լենինը նշում էր, որ ցարական կառավարությունը արտաքին նվաճումների միջոցով ուզում է խեղդել Ռուսաստանի և մյուս ժողովուրդների ազատագրական շարժումը, նրանց ձգտումը դեպի ազատություն ու մայրենի լեզուն։

Պատերազմի, խաղաղության և ռևոլյուցիայի վերաբերյալ լենինյան թեորիան ցույց էր տալիս, որ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատագրումը հնարավոր է միայն սոցիալիստական ռևոլյուցիայի միջոցով։ Իմպերիալիստական պատերազմի տարիներին Անդրկովկասի բոլշևիկները մինչև վերջ հավատարիմ մնացին սոցիալիզմի ու ինտերնացիոնալիզմի դրոշին. լենինյան ուսմունքով զինված՝ նրանք անողոք պայքար էին մղում դաշնակցության, վրացական մենշևիկների և մուսավաթականների դեմ, որոնք պաշտպանում էին կործանարար պատերազմը, Անդրկովկասի ժողովուրդների մեջ տարածում էին նացիոնալիստական վարակ։

1915 թ. հոկտեմբերի 1-ին Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային գրած ծածկագիր նամակում ջերմորեն պաշտպանելով պատերազմի մասին լենինյան հայացքները, Ս. Շահումյանը հաշիվ էր տալիս պարահայի առաջնորդին Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության վերաբերյալ, նշում էր Վ. Ի. Լենինի նամակների, խորհուրդների, ցուցումների խոշոր նշանակությունը Կովկասի բոլշևիկների համար։ «Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները,— գրում էր Շահումյանը Լենինին և Կրուպսկայային,— ինձ համար միշտ, ամենից թանկ են եղել... Դուք ուզում եք իմանալ, թե ես ինչ եմ մտածում և ինչ եմ անում։ Կարծեմ այս անգամ էլ Ձեզ հետ միանման եմ մտածում, և երբ առաջին անգամ ստացա դրա հաստատումը (մոտ մի տարի սրանից առաջ), շատ երջանիկ զգացի ինձ... Ընդհանրապես ասած՝ թույլ եմ տալիս

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 149։

կարծելու, որ ես և մեր բոլոր ազգականները [բոլշևիկները] բարձր ենք պահում մեր ընտանեկան [բոլշևիկյան պարտիայի] դրոշակը և որ Դուք կարող եք մեր ռեպուտացիայի համար հանգիստ լինել»[1]։

* * *

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման ու իրագործման ժամանակաշրջանում լենինյան գաղափարները, սոցիալիստական ռևոլյուցիայի լենինյան թեորիան խոր արմատներ են գցում նաև Հայաստանի բանվորների, գյուղացիների և զինվորների լայն մասսաների մեջ։ Բոլշևիկյան կազմակերպությունների գեկավարությամբ նրանք պայքարի են դուրս գալիս պրոլետարական ռևոլյուցիայի լենինյան գծի հաղթանակի համար։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո գրած իր հայտնի «Նամակներ հեռվից»-ում Վ. Ի. Լենինը նշում էր, որ Ռուսաստանի բուրժուական կառավարությունը «...պատերազմի կառավարություն է, իմպերիալիստական սպանդը շարունակելու կառավարություն, կոռուպտի կառավարություն, որն ուզում է կողոպտել Հայաստանը, Գալիցիան, Թուրքիան, խլել Կոստանդնուպոլիսը, նորից նվաճել Լեհաստանը, Կուրլանդիան, Լիտվական երկիրը և այլն...[2]

Հայ ժողովուրդը ջերմորեն ընդունեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, աշխարհում առաջին Սովետական կառավարության ստեղծումը Վ. Ի. Լենինի նախագահությամբ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի լենինյան դեկրետները բացեցին Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ազատագրության դուռը։

Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղվող պայքարը Անդրկովկասում և Հայաստանում ընթացավ յուրահատուկ, ավելի բարդ իրադրության պայմաններում, քան Ռուսաստանի կենտրոնական շրջաններում։ Այստեղ, օտարերկրյա իմպերիալիստների հովանավորությամբ ակտիվորեն գործում էին բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ դաշնակցականները, վրացական մենշևիկները, մուսավաթականները և այլն։ Թաքնվելով նացիոնալիստական դրոշակի տակ, չարաշահելով տեղական ժողովուրդների ազգային զգացմունքները, նրանք ամեն կերպ ձգտում էին կտրել նրանց համառուսաստանյան ռևոլյուցիոն շարժումներից, անջատել Անդրկովկասը Ռուսաստանից և հաստատել ազգային բուրժուազիայի քաղաքական տիրապետություն։ Այդ նպատակով 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց այսպես կոչված Անդրկովկասյան կոմիսարիատը, իսկ 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան սեյմը, որոնք հակասովետական կոալիցիայի գեկավար կենտրոններ էին՝ ուղղված Սովետական Ռուսաստանի և տեղի ժողովուրդների դեմ։

Վ. Ի. Լենինը ամենայն ուշադրությամբ հետևում էր Անդրկովկասում ծավալվող իրադարձություններին, գեկավար ցուցումներ էր տալիս և օգնություն կազմակերպում տեղական ժողովուրդներին նրանց ազատագրական պայքարում։ Սովետական կառավարությունը, Վ. Ի. Լենինի գեկավարությամբ, բազմիցս դրագվում է Կովկասի խնդիրներով։ Սովետական կառավարության որոշմամբ 1917 թ. դեկտեմբերին Ազգությունների գործերի ժողովրդական

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 348, 349։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 410։

կոմիսարիատին կից ստեղծվում է Հայկական գործերի կոմիսարիատ, որը խոշոր դեր է կատարում հայ ժողովրդին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի գրոշի շուրջը համախմբելու գործում։ Հայկական գործերի կոմիսար է նշանակվում ականավոր պետական գործիչ Վառլամ Ավանեսովը (Սուրեն Մարտիրոսյան), կոմիսարի տեղակալ՝ հայ անվանի պոետ, բոլշևիկ Վահան Տերյանը։

1917 թ. դեկտեմբերի 17-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը, Վ. Ի. Լենինի նախագահությամբ, քննարկում է Կովկասում ստեղծված դրության հարցը և որոշում Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անդամ և Բաքվի Սովետի նախագահ Ս. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։

Սովետական իշխանության առաջին իսկ լենինյան դեկրետների մեջ Ռուսաստանի մյուս ճնշված ու շահագործվող ժողովուրդների թվում, ճանաչվում է նաև հայերի իրավունքը ազատ կերպով որոշելու իրենց քաղաքական բախտը։

1917 թ. նոյեմբերի 20-ին Վ. Ի. Լենինի առաջարկով Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մասսաներին ուղղված դիմումի մեջ Սովետական կառավարությունը հայտարարում է, որ «...Թուրքիայի բաժանման և նրանից Հայաստանը «խլելու» մասին պայմանագիրը պատռված ու ոչնչացված է։ Երբ կդադարեն ռազմական գործողությունները, հայերին իրավունք կտրամադրվի ազատ կերպով որոշելու իրենց քաղաքական բախտը»[1]։

1917 թ. դեկտեմբերի 19-ին Սովետական Ռուսաստանը դիմում էր Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլգարիայի և Թուրքիայի ժողովուրդներին, կոչ անելով նրանց ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա, հրաժարվել ուրիշ երկրներ գավթելու իրենց քաղաքականությունից, թույլ չտալ գերմանական ու ավստրիական իմպերիալիստներին պատերազմ մղելու ռևոլյուցիոն Ռուսաստանի դեմ՝ Լեհաստանը, Լիտվան, Կուրլանդիան և Հայաստանը ստրկացնելու համար։

1917 թ. դեկտեմբերին Հայաստանի հարցը մի քանի անգամ քննարկվում և Ժողովրդական կոմիսարների Սովետի նիստերում (դեկտեմբերի 20-ին, 23-ին, 29-ին)։ Դեկտեմբերի 29-ին Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ստորագրությամբ դեկրետ է ընդունվում «Թուրքահայաստանի մասին», որը հրապարակվում է «Պրավդա» թերթում 1917 թ. դեկտեմբերի 31-ին և «Իզվեստիա ՎՑԻԿ»-ում՝ 1918 թ. հունվարի 1-ին։

«Ժողովրդական կոմիսարների Սովետը հայտարարում է հայ ժողովրդին — ասված է դեկրետում,— որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն»[2]։

1918 թ. հունվարին Սովետների Համառուսաստանյան 3-րդ համագումարը լիովին հավանություն է տալիս Սովետական կառավարության ազգային քաղաքականությանը, այդ թվում նաև «Թուրքահայաստանի» մասին լենինյան դեկրետին և հաստատում այն[3]։ Համագումարում ընդունված «Աշխատավոր

---

[1] Декреты Советской власти, էջ 114։

[2] Նույն տեղում, էջ 259։

[3] Նույն տեղում, էջ 341, 351։

ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայում», որը գրել էր Վ. Ի. Լենինը, նշված էր. «3-րդ համագումարը ողջունում է ժողովրդական կոմիսարների Սովետի քաղաքականությունը, որը հռչակել է Ֆինլանդիայի լիակատար անկախությունը, սկսել է Պարսկաստանից դուրս բերել զորքերը, հայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատություն»[1]։

«Թուրքահայաստանի մասին» դեկրետը պայմաններ պետք է ստեղծեր Թուրքիայի արյունոտ լծից արևմտահայերի ազատագրման համար։ Այն արտահայտում էր լենինյան հոգատարությունը հայ ժողովրդի նկատմամբ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Վ. Ի. Լենինն ընդունել էր ականավոր բոլշևիկ Սարգիս Լուկաշինին ու Վահան Տերյանին, զրուցել էր նրանց հետ հայերի վիճակի և Հայաստանի մասին։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Վ. Տերյանը դեկուցագիր էր ներկայացրել Արևմտյան Հայաստանի վիճակի վերաբերյալ[2]։

Պատմելով Վ. Ի. Լենինի հետ ունեցած իր տեսակցության մասին, Վ. Տերյանը նշում է, թե ինչպիսի ուշադրությամբ էր վերաբերվում Վ. Ի. Լենինը հայ ժողովրդի ազատագրման գործին։ Արևմտյան Հայաստանի հարցի և այդ կապակցությամբ Հայաստանից ռուսական զորքերը հանելու վերաբերյալ Վ. Ի. Լենինի հետ ունեցած իր զրույցի մասին Վ. Տերյանը պատմում է.

«Այսօր զրույց ունեցա այդ առթիվ և ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչու անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների և փախստականների վերադարձով ու այլ գարանտիաներով։ Նա շատ լավ վերաբերվեց և պարզեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, դրանով ուզում է ասել, թե երբ հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրիենտացիա ընդունելու։ Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան տարկավոր եղած զորամասեր...»[3]։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ ռուսական զորքերի Արևմտյան Հայաստանում մնալու հարցը պետք է լուծվի հենց իրենց՝ հայերի համաձայնությամբ։ Նրանք էլ պետք է որոշեն իրենց օրիենտացիայի հարցը։ Այսպիսի մոտեցումը լիովին բխում էր ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքից, որը հռչակել էր Սովետական իշխանությունը։

1918 թ. հունվարի 11-ին Վ. Ի. Լենինը ստորագրում է Վ. Տերյանի վկայականը, որով նա՝ որպես հայկական հարցի խորհրդական, լիազորվում էր մբռնելու ՌՍՖՍՌ-ի և քառյակ դաշինքի պետությունների միջև Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակցություններ վարող սովետական դելեգացիայի մեջ[4]։ Այսպես ելնելով «Թուրքահայաստանի մասին» դեկրետի սկզբունքներից, Վ. Տերյանը հետևողականորեն պաշտպանում է հայ ժողովրդի շահերը գերմանա-թուրքական գավթիչներից։

1918—1920 թվականներին, Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի ծանր ժամանակաշրջանում, Վ. Ի. Լենինը երբեք չէր մոռանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի, Հայաստանի մասին։ Ամենայն ուշադրությամբ հետևելով Անդրկովկասում ծա-

[1] Документы Советской власти, էջ 342։
[2] Տե՛ս «Ժիզն նացիոնալնոստեյ» № 18, 1920., «նորք», գիրք 5—6, էջ 406—418։
[3] Վահան Տերյան, Երկերի ժողովածու, Երևան, 1925, էջ 402—403։
[4] ՀՍՍՌ Գրական թանգարան, Վահան Տերյանի ֆոնդ, գործ 272։

վալվող իրադարձություններին, Վ. Ի. Լենինը ղեկավար ցուցումներ էր տալիս Կովկասի կոմունիստներին, օգնություն կազմակերպում Բաքվում ստեղծված Սովետական իշխանությանը, որը օտարերկրյա ինտերվենտների ու ներքին կոնտրռևոլյուցիայի դեմ մղված անհավասար մարտերում, Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակիցների ու աշակերտների ղեկավարությամբ, բարձր էր պահում Մեծ Հոկտեմբերի դրոշը, լուսատու փարոս հանդիսանալով իր ազատագրության համար պայքարող անդրկովկասյան բազմազգ աշխատավորության համար։

Վ. Ի. Լենինի այն ժամանակվա բազմաթիվ ճառերում, հոդվածներում և հեռագրերում տրված է Կովկասի քաղաքական իրադրության խորը վերլուծություն։ Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ղեկավարը, չնայած իր ծայրահեղ գրաղվածությանը, ժամանակ էր գտնում ընդունելու հայ ժողովրդի, Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչներին, զրուցում էր նրանց հետ, սովորեցնում, թե ինչպես պետք է հաղթահարել դժվարությունները, կազմակերպել պայքար Սովետական իշխանության հաղթանակի համար։

Վ. Ի. Լենինը մեծ հոգատարություն էր ցուցաբերում հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման նկատմամբ։ Նա հետաքրքրվում էր հայ գրականության, արվեստի, կուլտուրայի մասին գրքերով, հայկական թերթերով, կարդում, քաղվածքներ էր հանում նրանցից։ Պահպանվել է 1918 թ. օգոստոսի 20-ի մի գրություն, որով Վ. Ի. Լենինին էին ուղարկվում «Летопись исторических судеб армянского народа» և «Поэзия Армении в переводах русских поэтов» գրքերը[1]։ 1919 թ. մարտի 4-ին Վ. Ի. Լենինը կարգադրություն է անում Մոսկվայում հայկական ինստիտուտ կազմակերպելու մասին[2], որի համաձայն նախկին Լազարյան ինստիտուտը վերակառուցվում է, դառնում հայկական սովետական կուլտուրայի օջախներից մեկը։

1918—1920 թթ. հայերեն լեզվով թարգմանվում և հրատարակվում են Վ. Ի. Լենինի մի շարք աշխատությունները՝ «Նամակ ամերիկյան բանվորներին», «Կարլ Մարքս», «Պետություն և ռևոլյուցիա» և այլն, որոնք լայնորեն տարածվելով աշխատավորության մեջ, զինում էին նրանց խորը հավատով դեպի Սովետական իշխանությունը, կոմունիզմի գործի հաղթանակը։

Վ. Ի. Լենինը միշտ հետևում էր Հայաստանի բոլշևիկների գործունեությանը և աշխատավոր մասսաների՝ Սովետական իշխանության համար մղած պայքարին, խորհուրդներ էր տալիս, անձամբ կամ իր զինակիցների ու աշակերտների՝ Ի. Վ. Ստալինի, Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի, Ա. Ֆ. Մյասնիկյանի, Ա. Ի. Միկոյանի և ուրիշների միջոցով սիստեմատիկ օգնություն էր կազմակերպում նրանց։ Այդ ամենը հսկայական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի համար։

Սովետական իշխանության թշնամիների դեմ մղված պայքարում Հայաստանի բոլշևիկները, ոգեշնչված լենինյան հոգատարությամբ, ցուցաբերեցին անձնվիրություն և հերոսություն։ Ընդհատակյա աշխատանքի դաժան՝ պայմաններում նրանք ամրապնդում էին իրենց շարքերը, ընդլայնում կապերը

[1] Տե՛ս ЦПАИМЛ. ф. 2. л. 32245.

[2] «Իզվեստիա ՎՑԻԿ» № 55, 1918։

մասսաների հետ, ուժեղացնում պայքարը Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար։

1920 թ. աշնանը, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ, ՌՍԴԲՊ Կենտկոմը մի քանի անգամ քննարկում է Անդրկովկասի հարցը։ 1920 թ. նոյեմբերի վերջին Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ գրավելով Դիլիջանը, իրենց ողջույնի առաջին խոսքն ուղղում են Վ. Ի. Լենինին. «Թող հայտնի լինի համաշխարհային ռևոլյուցիայի առաջնորդին,— հեռագրում է նրանց անունից Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն,— որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները, զայրացած դաշնակների կառավարության հանցագործ քաղաքականությունից և երկրում սկսված անարխիայի խորացումից, բարձրացրին ապստամբության դրոշը»։ Այնուհետև Ռևկոմը հայտնելով ապստամբների հաջողությունների մասին, օգնություն էր խնդրում Սովետական Ռուսաստանից՝ Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակն ապահովելու համար։

Վ. Ի. Լենինի ցուցումով 11-րդ բանակի զորամասերը օգնության եկան ապստամբներին և դեկտեմբերի 2-ին ազատագրեցին Երևանը։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր։

Այս պատմական իրադարձության առթիվ Վ. Ի. Լենինը հենց նույն օրը ջերմորեն ողջունեց Հայաստանի աշխատավորությանը։ «Հանձին ձեզ,— գրում էր Լենինը Հայաստանի Ռևկոմի նախագահ Ս. Կասյանին,— ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Ձեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»[2]։

1920 թ. դեկտեմբերի 22-ին Սովետների Համառուսական 8-րդ համագումարում Վ. Ի. Լենինը կրկին ողջունեց Հայաստանի Սովետական ռեսպուբլիկայի ստեղծումը դիտելով այն որպես Կոմունիստական պարտիայի քաղաքականության հաղթանակ։ «Մենք պետք է ողջունենք,— ասաց Վ. Ի. Լենինը,— Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ոչ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրին բանվորների և գյուղացիների ձեռքը»[3]։

Այն օրերին ցնծություն ապրող հայ ժողովուրդը իր երախտագիտության առաջին խոսքն էր ուղղում Վ. Ի. Լենինին։ 1920 թ. դեկտեմբերի 6-ին Երևանի աշխատավորների միտինգը Լենինին ուղարկած հեռագրում ասում էր. «Խիտ և կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշակների շուրջը, աշխատավորությունը հանձին Ձեզ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխությունը, որի ալիքները խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստանին»[4]։

---

1 «Ժիզն նացիոնալնոստեյ» № 39, 1920 թ. 8 դեկտեմբերի։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 550։
3 Նույն տեղում, էջ 619։
4 «Կոմունիստ» № 3, 1920 թ.։

* * *

Վ. Ի. Լենինն անձամբ զբաղվում էր Սովետական Հայաստանի ամրապնդման ու զարգացման հարցերով։ 1920 թ. դեկտեմբերի կեսերին Լենինը ընդունում է Հայաստանի Ռևկոմի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանին ու Ա. Մռավյանին, զրուցում նրանց հետ Սովետական Հայաստանի վիճակի մասին և ցուցումներ է տալիս հետագա աշխատանքների համար։ Վ. Ի. Լենինը մեծ հոգատարություն է ցուցաբերում Հայաստանի օկուպացված շրջանները (Ալեքսանդրապոլը և այլն) թուրքական զավթիչներից ազատագրելու, Լոռին Անտանտայի իմպերիալիստների և վրացական մենշևիկների լծից փրկելու, Զանգեզուրը դաշնակցական հրոսակախմբերից մաքրելու հարցում։ «Լենինի մոտ» հիշողություններում Ա. Մռավյանը պատմում է, որ իրենց ընդունելության ժամանակ խոսելով Հայաստանի երկաթուղու մասին, Վ. Ի. Լենինն ասել է. «Թուրքիայի հետ բանակցություններ կսկսենք ու երկաթուղին կազատենք։ Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց Խորհրդային Հայաստանին կօգնենք անպայման»[1]։

1920 թ. հունվարի 18-ին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Վ. Չիչերինը հեռագրում է Գ. Կ. Օրջոնիկիձեին. «Թող ՌՍՖՍՌ-ի հատուկ լիազորը հատկապես պնդի Հայաստանը կատաստրոֆային դրությունից դուրս բերելու անհրաժեշտության վրա։ Թուրքերը... բլոկադայի են ենթարկում նրան, կողոպտում են, սովի են դատապարտում»[2]։ Փետրվարի 3-ին Գ. Վ. Չիչերինը հայտնում էր, որ Սովետական կառավարությունը շատ մեծ նշանակություն է տալիս Հայաստանի օկուպացված շրջաններում թուրքական կողոպուտներին և անկարգություններին վերջ տալու, Ալեքսանդրապոլը թուրքերից մաքրելու հարցին[3]։

Սովետական Ռուսաստանի վճռական պահանջով 1921 թ. ապրիլի 22-ին թուրքական զավթիչները հեռանում են Ալեքսանդրապոլ քաղաքից և գավառից, որոնք միանում են Սովետական Հայաստանին։ Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ ազատագրվում են նաև Լոռին ու Զանգեզուրը։

Պահպանվել են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վկայում են Վ. Ի. Լենինի մեծ հոգատարությունը դաշնակների և օտարերկրյա իմպերիալիստների կողմից ծայրահեղ քայքայման հասած Հայաստանին տնտեսական օգնություն ցույց տալու մասին։

Վ. Ի. Լենինի կարգադրությամբ Սովետական Հայաստան են ուղարկում 3 միլիարդ ռուբլու սովետական դրամանիշներ[4], հաց և այլ պարենամթերքներ։ «Ստացա Ձեր ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական գրության մասին,— հեռագրում էր Վ. Ի. Լենինը Գ. Կ. Օրջոնիկիձեին 1921 թ. ապրիլին,— մենք ձեռք առանք մի շարք միջոցներ, Հայաստանին մի քիչ ոսկի տվինք, հաստատեցինք Պարենկոմին տված ամեն տեսակ հանձնարարությունները»[5]։

---

1 «Խորհրդային Հայաստան» № 272, 1925, 20 նոյեմբերի։

2 ЦПАИМЛ, ф. 85.

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, ф. 2, оп. 1, ед. хр. 16518։

5 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 35, էջ 521։

Վ. Ի. Լենինի առաջարկությամբ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը բազմիցս քննարկում է Սովետական Հայաստանին օգնություն ցույց տալու հարցը։ Միջոցներ են բաց թողնվում Հայաստանի համար արտասահմանում տրակտորներ և բանող անասուններ գնելու։ Այդ ժամանակվա իր գրություններից մեկում Վ. Ի. Լենինը հայտնում է.«Նշեք, ուղարկված է արդյոք Հայաստանին ոսկի (1,5 միլ. ռուբ. կարծես որոշված է)։

Իսկ Հայաստանին օգնելու մյուս միջոցառումնե՞րը։

Պետք է արագացնել և ստուգել։

Սպասում եմ պատասխանին»[1]։

Վ. Ի. Լենինը ուշադրությամբ հետևում և անձամբ զբաղվում էր տեղական ազգային կադրեր դաստիարակելու, կենտրոնական շրջաններից Սովետական Հայաստան պարտիական, սովետական, տնտեսական կադրեր ուղարկելու, Հայաստանի պարտիական կազմակերպությունը ամրապնդելու գործով։ 1921 թ. ապրիլին, Վ. Ի. Լենինը ընդունում է պարտիական, սովետական և ռազմական ակնառավոր գործիչ Ա. Մյասնիկյանին, զրուցում է նրա հետ, ցուցումներ տալիս Կովկասի կոմունիստների անելիքների մասին։

Վ. Ի. Լենինի հետ ունեցած իր այս հանդիպման մասին հետագայում Ա. Ֆ. Մյասնիկյանը գրել է.«1921 թվականի ապրիլի կեսերին ես պետք է մեկնեի Սովետական Անդրկովկաս և ապա՝ Հայաստան։ Մոսկվայից մեկնելուց առաջ ես ընկեր Լենինի հետ տեսակցություն ունեցա, որի ժամանակ մենք մանրամասն զրուցեցինք այն մասին, թե ինչպես պիտի աշխատել Կովկասում, ինչ ձևով պետք է հաշվի առնել ռուսական ռևոլյուցիայի փորձը, ինչ քաղաքականություն վարել Թուրքիայի նկատմամբ։ Լենինը խորհուրդներ էր տալիս զգույշ և նրբանկատ լինել արևելքի ժողովուրդների նկատմամբ, որոնք արդեն արթնանում են, որոնք լուսավորության կարիք ունեն և որոնք լուսավորվելով, իրենց մոտ կկատարեն ավելի վիթխարի հեղաշրջում, քան տեղի ունեցավ Ռուսաստանում։ Մի խոսքով նա այն ժամանակ շարադրում էր մեր այն գիծը, որը մենք, 1921 թվականից սկսած, անց ենք կացնում Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում»[1]։

Վ. Ի. Լենինը սիրով հավանություն է Ա. Ֆ. Մյասնիկյանի խնդրանքին՝ իր մտքերը համառոտ նամակի ձևով շարադրելու և ուղարկելու Կովկասի ընկերներին։ Այդ նամակը, որը հայտնի է «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին» վերնագրով, իր հետ Կովկաս բերեց Ա. Ֆ. Մյասնիկյանը։ Այն ծրագրային նշանակություն ունեցավ ինչպես ամբողջ Կովկասում, այնպես էլ Հայաստանում Սովետական իշխանության հետագա ամրապնդման, սոցիալիզմի կառուցման համար։ «Ջերմագին ողջունելով Կովկասի Սովետական ռեսպուբլիկաները,— գրում էր Վ. Ի. Լենինը նամակում,— ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[2]։ Վ. Ի. Լենինը խնդիր էր դնում ամրապնդել Սովետական իշխանությունը, խելացիորեն հաշվի առնել տեղական առանձնա-

---

[1] Ленинский сборник, т. XXXV, էջ 355։

[2] Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, Երևան, 1958, էջ 191։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, 402։

հատկությունները, կոնկրետ պայմանները, նշում էր էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքների ծավալման անհրաժեշտությունը[1]։

Վ. Ի. Լենինը կոչ էր անում ամենավճռական ու անողոք պայքար մղել մենշևիկյան շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, որոնք խանգարում էին տեղական ազգությունների ժողովրդական լայն մասսաներին համախմբելու Սովետական իշխանության շուրջը, մեծ հարված էին հասցնում մեր երկրի ժողովուրդների եղբայրական կապերի ամրապնդմանը, խախտում էին Սովետական պետության հզորության հիմքերը։

Մեր երկրի բոլոր ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի հետագա զարգացման համար անգնահատելի նշանակություն ունեցան Լենինի նախաձեռնությամբ ստեղծված Անդրկովկասյան ֆեդերացիայի և առանձնապես ՍՍՌՄ-ի ստեղծումը, որը ազատ ժողովուրդների մեծ համագործակցություն ստեղծելու լենինյան իդեաների մարմնացումն էր, ամբողջ աշխարհում ազգային հարցի ճիշտ լուծման հիանալի օրինակ։

Կատարելով Լենինի պատգամները, մեր բազմազգ երկրի բոլոր ժողովուրդները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, հասել են աննախընթաց հաջողությունների, իրենց տնտեսության և կուլտուրայի չտեսնված ծաղկման։

В. И. ЛЕНИН И ОСВОБОЖДЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА

Г. Б. ГАРИБДЖАНЯН

(Резюме)

В статье, на основании литературных источников и архивного материала, автор показывает исключительную роль основателя и руководителя Коммунистической партии и Советского государства В. И. Ленина, как вдохновителя революционной борьбы армянского народа за свое освобождение от социального и национального гнета. Под непосредственным воздействием гениальных ленинских идей, его руководящих указаний росли и выковывались армянские революционеры — большевики, самоотверженные борцы за счастье народа. Под руководством В. И. Ленина и созданной им Коммунистической партии вековая борьба армянского народа за свободу и независимость увенчалась полной победой.

Идя по ленинскому пути, под водительством Коммунистической партии, трудящиеся Советской Армении в великой семье народов СССР достигли невиданных успехов. Мудрой ленинской национальной политикой армянскому народу навсегда обеспечена счастливая жизнь и грандиозные перспективы дальнейшего процветания.

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 494։